

**Աշխարհակարգ Է փոխվում նաև՝ դերակատարներ**

**Մարգարյան Սուրեն Թ.**

*պ.գ.դ., պրոֆեսոր, առաջատար գիտաշխատող, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, ՀՀ)*  
[sargsyansuren@yandex.ru](mailto:sargsyansuren@yandex.ru)

**EDN: BPZKZQ**

*Անխնաստ է չափել այն, ինչ արդեն կտրված է...  
Հրեական իմաստություն*

Մերօրյա աշխարհաքաղաքական խառնաշփոթից գլուխ հանելը շատ է դժվարացել: Ակնհայտ է սակայն, որ ամենուրեք երկակի, եռակի ու չգիտեմ քանիակի ստանդարտներ են կիրառվում: Իրար են խառնվել թշնամի ու հակառակորդ, բարեկամ ու դաշնակից հասկացություններն ու դրանց դերակատարները: Հստակ է մեկ բան՝ աշխարհակարգ է փոխվում, հետևապես նաև՝ դերակատարներ: Նախկին գլխավոր դերակատարները, որպեսզի մնան իրենց նախկին կարգավիճակում, կանխագալով, որ կարող են կորցնել թելադրողի իրենց իրավունքը՝ դիմում են գաղտնի ու բացահայտ խարդավանքների: Նախկինում էլ են մնան իրավիճակներ եղել, որոնք սովորաբար հանգեցրել են պատերազմների, նույնիսկ՝ համաշխարհային: Տա Աստված այս անգամ այդ միջոցը չդառնա վճռորոշ:

Ամենացավալին այն է, որ այս վտանգավոր շրջապտույտում է հայտնվել նաև Հայաստանը: Ազգիս 80%-ը խորը քնի մեջ է: Հոգեբույժները ասում են՝ դեպրեսիայի: Մի փոքր ակտիվանում են զարնանը և աշնանը ու նորից արջի քուն մտնում: Եթե դրա բուժումը չկա, ապրելու իմաստը ո՞րն է: Եվ եթե մեր ամենագետ իշխանությունները խելացի պահվածք չդրսևորեն, մենք կարող ենք հայտնվել անհայտության մեջ: Իրավիճակի այս գերլրջությունը լավ չպատկերացնելով կամ չուզենալով ըմբռնել, մեր քաղաքական վերնախավը շարունակում է իր անհասկանալի ու երբեմն չպատճառաբանված գործունեությունը: Իշխանությունները գրեթե ամեն շաբաթ անհասկանալի ու չեղած տոներ են հռչակում: Բազմազույն փառատոներ են կազմակերպում, հյուրասիրություններ ու քեֆեր և երջանկացնում ձրի ուտող-հարբողներին:

Ընդդիմությունն էլ պարբերաբար հավաք-միտինգներ է կազմակերպում, չհասկանալով, որ հասարակությունը չի կարող անընդհատ՝ ամիսներով, տարիներով գնալ հանրահավաքի: Ամեն անգամ կանչում են, կրակոտ ելույթներ հնչեցնում, պայմանաժամ դնում իշխանության առաջ, իսկ հետո մարդկանց ուղարկում տուն: Այդ պահանջները իշխանության կողմից չեն կատարվում, և մարդիկ հիասթափվում են: Այսպիսի դեպքերի համար են ասել, որ կան մարդիկ, ովքեր այնքան են տարվում ուրիշներին կործանելու մտքով, որ չեն նկատում, թե ինչպես են կործանում իրենք իրենց: Կարևոր է նաև գիտակցել, որ այս փաստորեն անարդյունք գործընթացն ավելի է թևավորում, անպատժելի դարձնում երկրի ու ժողովրդի ճակատագիրը տնօրինողներին, քանզի ոչինչ այնքան չի այլասերում իշխանությանը, որքան ժողովրդի տևական համբերությունը: Հենց այստեսակ վիճակների համար է ասված՝ կեղծավոր մարդիկ բարի մարդկանց վերաբերվում են, ինչպես մրգատու ծառի՝ սկզբում քաղում են բերքը, իսկ երբ բերքը վերջանում է, կոտորում են ճյուղերն ու հեռանում: Արդյունքում՝ ոմանք խոսում ու որոշում են մնացյալների փոխարեն:

Վերջերս հաճախ եմ մտածում՝ ամեն ինչ, կամ ոչինչ և հասկանում եմ, որ իբրև քիչ ծեր էի, ամեն օր ավելի եմ ծերանում և միշտ ինքս ինձ սփոփում եմ ու երանի տալիս հիշելով պայքարի մեր տարիները: Կյանքն ուսուցանում է, որ ընկերությունը, եթե այն հիմնված է անկեղծության ու վստահության վրա, ամենաթանկ բանն է աշխարհում: Պատմությունն էլ մեզ սովորեցնում է վատ ընկերոջ հետ անտառ չգնալ և թուրքին չհավատալ, բայց ցավոք սրտի մենք դաս չենք քաղում: Ավելին, աստիճանաբար նշմարվում է, որ մեր քաղաքական վեկտորն այսօր շրջադարձ է կատարում դեպի Արևմուտք, որի ներկայացուցիչն ու լիազորը մեր տարածաշրջանում հենց Թուրքիան է իր վասալներով հանդերձ:

Վերջերս ընկերներով հաճախ ենք զրուցում ծերության մասին, երբեմն ճնշվում ենք տարիների բեռից, նեղվում առողջական խնդիրներից, բայց երբ հիշում ենք, թե ինչպես մի ողջ սերունդ քսան-քսանհիզ չդարձած նահատակվեցին, ծերությունը հրաշք է թվում: Կարծում եմ ամփոփ ձևով ասած ծերությունը՝

Սկսվում է այն ժամանակ, երբ ավելի շատ փող է ծախսվում առողջությունը վերականգնելու, քան այն քայքայելու վրա:

Ի վերջո մենք աշխատում ենք 8 ժամ, 4 ժամ ապրելու համար:

Աշխատում ենք շաբաթը 5 օր, որպեսզի վայելենք 2-ը:

Աշխատում ենք 8 ժամ, որպեսզի հասցնենք ուտել 15 րոպեում:

Աշխատում ենք 8 ժամ, 6 ժամ քնելու դեպքում:

Ամբողջ տարին աշխատում ենք մեկ-կամ երկու շաբաթ արձակուրդի համար:

Ողջ կյանքն աշխատում ենք միայն ծերության թոշակի անցնելու համար:

Բայց կյանքն աննկատ թռչում-անցնում է: Իսկ այդ շրջայի հարահոսում մենք այնքան ենք հարմարվել նյութական և սոցիալական ստրկությանը, որ այլևս շրթաները չենք էլ նկատում:

Իրավիճակը ճիշտ հասկանալու համար բանալի կարող է դառնալ Կոնֆուցիուսի այս միտքը՝ «Եթե դու սենյակի ամենախելացի մարդն ես, ուրեմն սխալ սենյակում ես»: Ընդ որում դա կարելի է դիտարկել իմաստասիրական և քաղաքագիտական ուսման ճանաչողական և բացահայտել մարդկային վարքի, հանրության և առաջնորդության բնորոշ կողմերը:

Փիլիսոփայական տեսանկյունից այս աֆորիզմը ընդգծում է մշտական ինքնակատարելագործման և սովորելու կարևորությունը: Յուրաքանչյուր անհատ պետք է ձգտի այնպիսի միջավայր, որտեղ հնարավորություն ունի սովորելու ավելի խելացի մարդկանցից: Քանի որ այն միջավայրում, որտեղ ամենախելացին եք համարվում, այնտեղ զրկված եք մտավոր աճի հնարավորությունից, իսկ դա հակասում է շարունակական ինքնագարգացման ձգտումներին: Մտածողն այս դեպքում խոնարհության և սեփական սահմանափակումների գիտակցման կոչ է անում: Հպարտության և ինքնագոհության նշանները խանգարում են մարդուն տեսնել իր թույլ կողմերը և խոչընդոտել դրանց զարգացմանը: Հասկանալը, որ միշտ կա ինչ-որ բան, որ կարող ես սովորել ուրիշներից, օգնում է քեզ պահպանել օբյեկտիվ տեսակետ քո սեփական եսի մասին: Մոցիալական փոխազդեցության առումով էլ է կարևոր գտնվել ավելի խելացի մարդկանց շրջապատում, քանի որ դրանով խթանվում է մտավոր ակտիվ լինելը, որը զարգացնում է քննադատական մտածողությունն ու գիտելիքները:

Քաղաքագիտական տեսանկյունից քաղաքական գործչի համար կարևոր է, որ ինքը շրջապատված լինի գրագետ և իմաստուն ենթականերով: Կոնֆուցիուսի այս աֆորիզմը ուղերձ է հենց առաջնորդներին: Շրջապատված լինել մարդկանցով, ովքեր կարող են նրան մարտահրավեր նետել խելացի գաղափարներով և քննադատությամբ՝ հանգեցնելով ավելի հավասարակշռված և տեղեկացված որոշումների: Սակայն երբ իշխանությունը կենտրոնանում է մեկ մարդու ձեռքում, առաջնորդն իր շուրջն է հավաքում այնպիսի մարդկանց, որոնց մտավոր և մասնագիտական կարողություններն ակնհայտորեն զիջում են իր կարողություններին: Մա հստակ մտադրություն է, քանի որ նման առաջնորդները վախենում են իրենց կարգավիճակին սպառնացող ցանկացած սպառնալիքից և, հետևաբար, նախընտրում են թույլ, անդեմ կատարողների, ովքեր չեն համարձակվում վիճարկել իր հեղինակությունը: Որպես կանոն, գրագետ և քննադատաբար մտածող գործընկերների բացակայությունը հանգեցնում է սխալ որոշումների կայացման, որն էլ անխուսափելիորեն հանգեցնում է ամբողջ համակարգի դեգրադացմանը: Իսկ դա էլ իր հերթին չի հիմնվում իրական հմտության և իմաստության վրա, այլ միայն վախեցած ենթարկվելու բնագրի: Կոնֆուցիուսի աֆորիզմն արհամարհող առաջնորդների շուրջ անխուսափելիորեն ձևավորվում է մտավոր և մասնագիտական անկման դատարկություն, և չնայած իրենց թվացյալ ուժին, նրանք զնալով ավելի մեկուսացված և խոցելի են դառնում, վերջիվերջո՝ կորցնելով իրենց քաղաքական առաջնորդությունը: Ինչ վերաբերում է մեր իրականությանը, ապա նման առաջնորդի քաղաքական գոյությունը երաշխավորվում է ոչ թե անդեմ ենթակաների քանակով կամ այն հանգամանքով, թե որքանով են նրանք խելամտորեն և արդյունավետ կերպով կարողանում ղեկավարել ընդունակ և խելացի հանրությանը, այլ այդ հանրության՝ խելացի և ուժեղ առաջնորդությամբ ընդվզելու կարողության բացակայությամբ: Իսկ հասարակության այդտեսակ շարունակվող հետընթացը և իշխանությունը կորցնելու մշտական վախը, որոնք առկա են մեզանում, վստահաբար լավ տեղ չեն տանի:

Վերջերս շատ է խոսվում կվադրոբերների մասին: Դրանք կենդանիներին նմանակող մարդիկ են: Կվադրոբերները նաև նոր երիտասարդական շարժում է, որի ներկայացուցիչները տեղաշարժվում են չորս ոտքերի վրա և ընդօրինակում են կենդանիների շարժումները: Հասկացանք, այդ դեպքում ի՞նչ անուն ունեն մեր շուրջը վիստացող կենդանիները, որոնք նմանակում են մարդկանց: Իսկ հոկտեմբերի 9-ի հանդիպման ժամանակ երբ Ռուսաստանի արտգործնախարար Մերգեյ Լավրովը Հայաստանի արտգործնախարարին հարցրեց, թե «Հայաստանում կվադրոբերներ ունե՞ք»: Հայաստանի արտգործնախարարը, ում համար անսպասելի է եղել հարցը, առանց մտածելու անկեղծ պատասխանել է. «Իհարկե, ունենք: Մեր իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, կառավարության բոլոր անդամները մեր վարչապետի կվադրոբերներն են: Այնպես որ, ձեր առջև այժմ նստած է իրական կվադրոբերներ: Ի դեպ, մեր վարչապետն էլ իր հերթին հանդիսանում է Թուրքիայի նախագահի կվադրոբերները», -տեղեկացնում է «168 ժամ» թերթը: Այնպես որ, հոգաշատ Հայաստանում ամեն ինչ խառնվել է իրար...:

Ակ-կոյունլու և կարա-կոյունլու քոչվոր ցեղերը ապավինեցին իրենց պոզերին, իսկ հայր. ի վերուստ՝ խաչին: Ո՞վ շահեց: Ուրեմն, գնահատենք այն, ինչ ունենք, մոռանանք նախկին անհաջողությունները և հասնենք նրան, ինչի մասին երագում ենք: Կարևոր է, որ մարդ միշտ իմանա իր գինը, բայց գեղջերը կիրառի ճիշտ պահին, ոչ թե ըստ անհրաժեշտության: Շատ արդար լինելով ու չափից ավելի իմաստուն համարվելով ինքդ քեզ կկործանես: Քանզի կյանքը պատերազմ է, իսկ մեր տեսակի համար պետք է պատերազմել մինչև վերջ: Դա է խաղաղության բանալին: Երկրներ կան, որոնք ոչ մի թշնամի չունեն, իսկ մենք մի քանիսն ունենք՝ ցավոք, նաև ներսից:

*Сдана / Հանձնվել է՝ 15.10.2024*

*Рецензирована / Գրախոսվել է՝ 16.10.2023*

*Принята / Ընդունվել է՝ 17.10.2023*